ԱՄԱՆՈՐՅԱ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԼԻՆԵԼԸ ԿՈՉՈՒՄ Է, ԻՍԿ ՄԱՐԴ ԼԻՆԵԼԸ՝ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարինա Կիրակոսյան-Մոսեսովա: Վիրահայ, ռուսագիր բանաստեղծ, թարգմանիչ:

Ծնվել եւ ապրում է Թբիլիսիում: Վրաստանի գրողների, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունների, Պուշկինյան գրական «Արիոն» ընկերության անդամ է: Մոսկովյան «Տարվա բանաստեղծ» մրցանակաբաշխության, «Հայաստանի մոտիվները» 4-րդ Միջազգային մրցույթի մրցանակակիր: Պարգեւատրվել է Հայաստանի մշակույթի նախարարության պատվոգրով, Վրաստանի մշակույթի նախարարության «Իվերիա» մրցանակով, «Իլիա Ճավճավաձեի» հուշամեդալով: Հեղինակ է մի քանի ժողովածուի: 2007թ. լույս տեսավ նրա հայերեն՝ «Սրտի ուղեծիր» բանաստեղծական ժողովածուն (թարգմանիչ՝ Արա Արթյան): Մարինա Կիրակոսյանի չափածոն տեղ է գտել Մոսկվայում հրատարակված «Հայաստանը բանաստեղծի սրտում» ժողովածուում, որտեղ զետեղված են Վալերի Բրյուսովի, Սերգեյ Գլինկայի, Սերգեյ Գորոդեցկու, Եղիշե Չարենցի, Ակակի Ծերեթելու, Եվգենի Եվտուշենկոյի, Միլվա Կապուտիկյանի ստեղծագործություններում... Նրա բանաստեղծություններով գրվել են երգեր, ռոմանսներ:

Այսօր մեր խմբագրության հյուրը Մարինա Կիրակոսյանն է:

- Ինչպե՞ս եք ընկալում «Բանաստեղծի առաքելություն» ասվածը:

- Իմ կարծիքով, բանաստեղծի առաքելությունը կայանում է նրանում, որ կարողանա հագեցնել մարդկության հոգեւոր ծարավը: Երբեմն նույնիսկ ամենաբարձր վարպետությամբ կառուցված բանաստեղծությունը չի վկայում պոետ լինելու մասին: Ճշմարիտ պոեզիան դատարկ բառախոսություն չէ, որ զարդարված է հստակ չափով ու ռիթմով...

Բանաստեղծի առաքելությունը Ոգուն ծառայելն է. Աստծո ոգեշնչությանը ենթարկվելն ու քնած, նիրհող հոգիներին կյանքի կոչելը՝ նրանց հոգեղեն արժեքներին ու ճշմարտություններին հաղորդակից դարձնելը:

Գերմանացի մեծ գրող Գյոթեն (1749-1832) գրել է՝ «Իսկ ով չի անսա պոետի ձայնը, նա սոսկ բարբարոս է՝ ով եւ ինչ էլ լինի»: Իրականում, բանական ու խելամիտ մարդու համար, ոչ մի շքեղություն եւ նյութական արժեքներ չեն փոխարինի արվեստին ու պոեզիային: Բանաստեղծական ճշմարիտ խոսքը փոխանցում է խորը զգացմունքներ, որ բխում են մարդկային հոգու խորքերից: Հնդիկ բանաստեղծ Ռաբինդրանաթ Թագորը (1861-1941) ասել է՝ «Պոեզիան այն անխուսափելիությունն է, որ ծնվում է, երբ հողն արդեն արգահատելի է, իսկ երկինքը՝ անհասանելի»:

Ահա ինչու, ճշմարիտ պոետը երբեք չի հրաժարվում Սիրո եւ Արդարության իդեալներից:

- Բոլոր ժամանակներում բանաստեղծն ունի միեւնո՞ւյն առաքելությունը:

- Պոեզիան մշտական եւ սոցիալական երեւույթ է, որը կոչված է կենդանի արձագանք արթնացնելու ընթերցողի հոգում եւ բանականության մեջ: Այո, ամեն մի նոր ժամանակաշրջան բերում է նոր բանաստեղծական դպրոցներ, ուղղություններ, ոճեր եւ ձեւեր: Բայց, իմ կարծիքով, բանաստեղծի առաքելությունը բոլոր ժամանակներում մնում է նույնը՝ նա կոչված է բացահայտելու աշխարհի անտեսանելի գեղեցկություններն ու նրա անընկալելի երաժշտությունը եւ, միեւնույն ժամանակ, ձաղկելու չարն ու անարդարությունը: Հիշենք՝ լավ փիլիսոփայությունը միշտ բանաստեղծական է, իսկ լավ բանաստեղծությունը՝ փիլիսոփայական: Զուր չէ, որ հնում փիլիսոփայական քննախոսությունները գրվում էին չափածո:

Բանաստեղծի խոսքը ի զորու է միավորել մարդկանց որոշակի սոցիալական գաղափարի շուրջ:

- Ո՞ր հույզերն են խախտում Մարինա Կիրակոսյանի հոգու լռությունը:

- Մեծերից մեկն ասել է՝ «Եթե ոչինչ չի ցավում, ապա գրելը հանցանք է»: Ու դա երիցս ճշմարտություն է:

Երբեք չեմ գրում այնքան շատ եւ այնքան խոր, որքան մարդկային հույզերի ու զգացմունքների շիկացման դեպքում: Բացահայտ լպիրշությունն ու անարադարությունը իմ մեջ առաջացնում են ֆիզիկականի հասնող ցավ:

Արցախյան պատերազմի 44 օրերի ընթացքում գրած իմ բանաստեղծություններն այդ ցավի արտահայտություններն էին: Ուզում եմ հիշել պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսու (940-1020) պատգամը՝ «Կյանքի օրենքը դա է. երբ իշխում է չարը, նա մեկ թամբի վրա է, մեկ թամբն է նրա վրա...»:

Տա' Աստված, որ հավերժի խաղաղությունը ու նրա բերած բարի հույզերը:

- Կա՞ թեմա, որի մասին գերադասում եք չխոսել:

- Երեւի թե չկա այնպիսի թեմա, որը ես շրջանցեմ: Եթե ինձ ինչ-որ բան մտահոգում է՝ լինի դա քաղաքականություն, փիլիսոփայություն, աշխարհաստեղծման կամ սիրո, բնության թեմա, ապա եթե ոչ առաջնագծում, բայց ինչ-որ կերպ իր արձագանքը գտնում է իմ հոգում եւ ստեղծագործություններում:

- Ոմանք պնդում են, որ բանաստեղծ լինելը պարտականություն է եւ ոչ թե կոչում:

- Ես կարծում եմ, որ բանաստեղծ լինելը կոչում է, իսկ մարդ լինելը՝ պարտականություն:

- Ցավոք, կյանքը լի է նաեւ չարով, նենգով, դավով. ինչպե՞ս եք պայքարում դրանց դեմ:

- Այո, մարդկային էությանը հատուկ է չարությունը, դավաճանությունը, խարդավանքը: Եթե անցյալներում մարդիկ ավելի պարզամիտ, միամիտ ու անկեղծ էին, եւ «պատիվ» ասվածը դատարկ խոսք չէր, ապա այսօր շատերը չեն խուսափում ոչ մի ստորությունից: Մարդկային զգացմունքները մանրացան, պատիվն ու խիղճը դարձան ծախու եւ վաճառելի, եւ դրա դեմ պայքարը դժվար է:

- Դուք մեծացել եք Թբիլիսիում եւ լավ եք ճանաչում թե' հային, թե' վրացուն: Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞վ են նրանք իրարից տարբերվում:

- Իմ համոզմամբ, հայերն ու վրացիները ավելի շատ ունեն ոչ թե տարբերություններ, այլ ընդհանրություններ: Այդ ընդհանուրի մեջ արտացոլված է մեր հազարամյա հարեւանությունը, մեր ավանդույթների ու մշակույթների փոխադարձ ներթափանցումն ու փոխհյուսվածությունը իրար: Զուր չէ, որ հայերի ու վրացիների նախնիները՝ Հայոսն ու Քարթլոսը, եղել են հարազատ եղբայրներ: Թեեւ այդ մասին պատմում է լեգենդը, բայց դրա ակնհայտ փաստումը իրականությունն է: Լեգենդները հենց այնպես չեն ստեղծվում: Ինչպես հարազատ եղբայրների մեջ, մեզանում էլ երբեմն լինում են տարաձայնություններ ու փոխադարձ վիրավորանքներ, բայց անհիշելի ժամանակներից մենք ապրել ենք համերաշխ ու ավելի քան երկու հազար տարիների ընթացքում միասին պայքարել ընդհանուր թշնամիների դեմ: Նույնիսկ առօրյա շփումներում կան հայի եւ վրացու բարեկամության շատ օրինակներ: Հիշենք թեկուզ Թամար Թագուհուն եւ նրա զորավար Զաքարիա Երկայնաբազուկին, Հերակլ Երկրորդի աշուղ Սայաթ-Նովային, հայ եւ վրաց եկեղեցիներում սրբացված Շուշանիկին եւ այլն:

- Դուք խոստովանեցիք, որ բազմազգ ընթերցողներ ունեք, համացանցի շնորհիվ ստանում եք նրանց ջերմ արձագանքները, այդ շփումը Ձեզ համար ի՞նչ է...

- Չեմ թաքցնի, որ ինձ համար շատ հաճելի են ընթերցողներիս բարի արձագանքները: Իմ հերթին, ես ընթերցողին իմ սերն եմ տալիս, շռայլորեն կիսվում եմ նրա հետ իմ ապրումներով, փոխանցում եմ նրան սրտիս, թող որ երբեմն հուզված ու անհամաչափ, բայցեւ կենդանի տրոփյունը: Իմ բանաստեղծությունը, ինչի մասին էլ լինի՝ բնություն, կյանք, սեր, բարություն, խիղճ, պատիվ... իմ սերն է՝ այս հեղհեղուկ, հիասքանչ ու դաժան Աշխարհին: Այդ զգացմունքի շնորհիվ, ես կարողացա զգալ հավերժությունը... Ուստի, դա երջանկություն է:

- Ի՞նչ կցանկանաք Ձեր հայրենակիցներին 2021 տարում:

- Մենք կանգնած ենք 2021թ. շեմին, ուզում եմ շնորհավորել Վրաստանի եւ Հայաստանի իմ սիրելի հայրենակիցներին՝ Նոր տարվա առթիվ եւ մաղթել, որ 2021-ը լինի նախորդ տարուց ավելի բարի, քնքուշ ու երջանկաբեր:

Թող 2020-ի հետ դեպի անհայտություն գնան բոլոր դժբախտությունները, աղետները, ձախորդությունները, ու Նոր տարին արդարացնի բոլորիս հույսերը՝ բերի ուրախ, բարի, ստեղծարար օրեր: Թող 2021-ը լինի Սիրո, Բարու, Խաղաղության, Արդարության, Իմաստության տարի: Ամեն:

Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

GLOVO-Ի ԵՎ TBC-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՐՏԱՓՆԵՐԻՆ

Glovo-ի եւ TBC-ի համատեղ նախաձեռնությամբ, արդեն հասանելի է վրացական ստարտափների արտադրությունը Glovo-ի ներդիրում: Դեկտեմբերի 15-ից ներմուծվել է ներդիրի նոր, ստարտափ կատեգորիա, եւ այսուհետ սպառողը հնարավորություն ունի փոքր արտադրողների ապրանքը ձեռք բերել հեշտությամբ եւ անվճար մատակարարման ծառայության շնորհիվ:

Բիզնեսին աջակցելու համար, TBC բանկի «Ստարտափ» ծրագիրն ապահովում է ստարտափցիների ինչպես գործարքային ծախսերը, այնպես էլ՝ նրանց մարկեթինգային աջակցությունն ու վաճառքի խթանումը: Սկսնակ բիզնեսների ներկայացուցիչները GLOVO ներդիր սեփական արտադրանքի տեղադրումը կիրականացնեն անվճար:

GLOVO-ի եւ TBC-ի նախաձեռնության նպատակը մի կողմից առկա մարտահրավերի ֆոնին ստարտափների աջակցությունն է, մյուս կողմից՝ սպառողի կենսակերպի դյուրացումը եւ հարմարավետ ծառայության առաջարկումը:

GLOVO ներդիր ստարտափ ապրանքների գրանցումն արդեն սկսված է, այդ նպատակով սկսնակ բիզնեսի ներկայացուցիչներն օնլայն ներդիր են լրացնելու:

- Այն իրականությունը, որի մեջ ապրում ենք այս վերջին մեկ տարվա ընթացքում, շատ է փոխվել: Այս մարտահրավերի ֆոնին, աջակցությունը բիզնեսին եւ հոգատարությունը սպառողի հանդեպ, հատկապես կարեւոր նշանակություն են ստացել: Ուրախ ենք, որ GLOVO-ի հետ համագործակցության շրջանակներում, մենք միասին կկարողանանք տոնական տրամադրության ստեղծել՝ կանգնելով սպառողի ու ստարտափների կողքին: Կարծում ենք, այս նախաձեռնությունը կվերածվի տոնական տոնավաճառի օնլայն այլընտրանքի, եւ սպառողներն իրենց սիրելի մարդկանց ուրախություն կպարգեւեն մեր հարթակի միջոցով,- ասում է GLOVO Վրաստանի գլխավոր մենեջեր Գիորգի Քերքաձեն:

- Աջակցությունը բիզնեսին TBC-ի առաջնահերթություններից է: Մեր թիմը մշտապես գործում է բիզնեսին մշակված ապրանք եւ ծառայություն առաջարկելու եւ վերջիններիս գործունեությունը դյուրացնելու ուղղությամբ: GLOVO-ի եւ TBC-ի նախաձեռնությունը մի կողմից կնպաստի ստարտափների սեփական ապրանքի իրացմանն ու մարկեթինգային աջակցությանը, մյուս կողմից՝ սպառողին հնարավորություն կտա հեշտությամբ եւ հարմարավետ պայմաններում ձեռք բերել ցանկալի ապրանք: Այս նախաձեռնությունը, կարծում եմ, շատ կարեւոր է առկա իրականության մեջ,- նշում է TBC-ի միկրո փոքր եւ միջին բիզնեսի ծառայության ղեկավար Նաթիա Վաճարաձեն:

Ստարտափներն այս առաջարկից հնարավորություն կունենան օգտվել մեկ ամսվա ընթացքում, մինչեւ հունվարի 15-ը:

TBC ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Վարկանիշային միջազգային գործակալությունը, Moody's ավելացրել է օտար արժույթի դեպոզիտների վարկային վարկանիշ-ը TBC բանկին՝ Ba3-ից հասցնելով մինչեւ Ba2, իսկ կանխատեսումը հաստատել որպես «կայուն»:

Վարկանիշային գործակալության կողմից վարկանիշի աճը պայմանավորված է մեթոդաբանական փոփոխություններով, որոնք երկրների համար տեղական ու օտար արժույթի մեջ վերանվանված օբլիգացիաների եւ այլ պարտավորությունների, այսպես կոչված «վարկանիշային առաստաղն» են սահմանում: Նշված փոփոխությունը ուժի մեջ է մտել ընթացիկ տարվա դեկտեմբերից: Մեթոդաբանության նորացման արյունքում, Վրաստանում աճել է օտար արժույթի վերանվանված դեպոզիտների հանդեպ հաստատված վարկանիշային առաստաղը, որին հաջորդել է TBC բանկի օտար արժույթի դեպոզիտների վարկային վարկանիշի մեկ աստիճանով, մինչեւ Ba2 մակարդակի բարձրացումը:

COVID - 19

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅՍ ԱՆԳԱՄ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԲԵՐՎԵՆՔ ԱՅԼ ԿԵՐՊ»

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն բնակչությանը կոչ է արել այս տարվա Ամանորյա տոնակատարություններին վերաբերվել այլ կերպ եւ նշել համեստորեն: Պատճառը մեկն է՝ 2-3 օրում ջուրը չլցնել կառավարության հաջողությունները: Նրա խոսքով, չպետք է կրկնվի այն, ինչը տեղի ունեցավ «Սեւ ուրբաթ»-ից հետո:

- Չնայած կարգավորմանը, այս սահմանափակումների ֆոնին նվազման դինամիկա չենք տեսնում: Այդ պատճառով խնդրում ենք ձեզ, այս տոները խաղաղ անցկացնել: Մեզ պետք չեն հավաքներ, մեծ տոներ: Այս տարի շատ ավելի համեստ լինենք: Գործ ունենք լուրջ մարտահրավերի՝ համավարակի հետ: Ընդգծում եմ՝ կա կայունացում, սակայն այս ամենը 2-3 օրում ջուրը լցնելու մեծ վտանգի առջեւ ենք կանգնած,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն եւ հավելեց, որ, ելնելով իրավիճակից, կառավարությունը, հնարավոր է նոր սահմանափակումներ մտցնի, եւ կամ էլ ավելի խստացնի գործող սահմանափակումները:

Ինչ վերաբերում է դեկտեմբերի 24-ից հունվարի 2-ը բացառության կարգով սովորական կյանքի ընթացքին վերադառնալուն, տեղեկություն է շրջանառվում, որ այս որոշումը հնարավոր է չեղարկվի:

ՁԱՆՔԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ՝ ԿՈՎԻԴՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ըստ նրանց, ստեղծված համավարակաբանական իրավիճակի ու արդյունավետ կառավարման արդյունքում բնակչության շրջանում խուճապային նշանները նվազում են, եւ վիրուսին հարմարվելու տարրերը հստակ տեսանելի են: Այնուամենայնիվ, պետության, մասնավոր հատվածի եւ քաղաքացիների կողմից կարեւոր է պահպանել բոլոր կանոնները վիրուսի տարածումը կանխելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաեւ իրավիճակը կովիդ - հյուրանոցներում, որտեղ հզորացվում են բուժական տարրերը՝ ապահովվելով թթվածնի մատակարարմամբ: Վարչապետի գնահատմամբ, կովիդ - հյուրանոցների արդյունավետ կառավարման արդյունքում անհրաժեշտ է հնարավորինս բեռնաթափել հիվանդանոցային հատվածը, որպեսզի հատուկ բժշկական ծառայությունների բուժման կարիք ունեցող անձինք դուրս չմնան կլինիկաներից:

Կառավարության ղեկավարին մանրամասն տեղեկություն ներկայացվեց հիվանդանոցային ոլորտում ազատ մահճակալների իրավիճակի եւ լրացուցիչ վերակենդանացման մահճակալների ու համապատասխան բժշկական սարքավորումների մոբիլիզացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 75 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 75 452 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 671 735 հազարը: Ապաքինվել է 53 միլիոն 009 785 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **17 628 578** դեպք: Այստեղ մահացածների թիվը **317 929** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **9 987 845**-ի, մահացածներինը՝ **144 912**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **7 111 527**, մահացել՝ **184 876** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **2 791 220**, վարակի հետեւանքով մահացել՝ **49 762** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Իսպանիան ու Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **152 253**-ի, մահացածներինը՝ **2 596**-ի, ապաքինվածներինը՝ **131 213**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **195 422** մարդ: Վարակից մահացել է **2 133,** ապաքինվել՝ **131 252** մարդ:

Վերջին տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **204 003,** մահացել՝ **2 002,** ապաքինվել՝ **171 526** մարդ:

*Դեկտեմբերի 18-ին կորոնավիրուսով վարակման **2 635** նոր դեպքերից **1 134**-ը **Թբիլիսիում է, Աջարիայում՝ 230, Իմերեթիում՝ 338, Քվեմո Քարթլիում՝ 216, Շիդա Քարթլիում՝ 169, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 199, Կախեթիում՝ 186, Գուրիայում՝ 66, Մցխեթա-Մթիանեթիում՝ 46, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 12, Սամցխե-Ջավախեթիում՝ 39:***

60 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ COVID-19-Ի ՀԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրամիությունը 60 միլիոն եվրոյի (շուրջ 240 միլիոն լարի) դրամաշնորհ է հատկացրել Վրաստանին, COVID-19-ի ճգնաժամը հաղթահարելու համար: Այս միջոցները նախատեսված են Վրաստանի կառավարության հակաճգնաժամային տնտեսական ծրագրի իրականացմանը աջակցելու համար:

- Եվրամիությունը շարունակում է անխափան աջակցել Վրաստանին համավարակի ընթացքում: 240 միլիոն լարի դրամաշնորհին այն 1,5 միլիարդ լարի դրամաշնորհի մասն է, որը կենտրոնացվել է Եվրամիության ու Եվրոպական թիմի կողմից այս տարվա գարնանը, եւ որը նպատակ ունի աջակցել Վրաստանի կառավարությանը համավարակի դեմ պայքարում, ինչպես նաեւ Վրաստանի քաղաքացիներին շատ սուր մարտահրավերները հաղթահարելու համար,- հայտարարեց Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելը:

«Այս միջոցները առաջին մասնաբաժինն են այն 75 միլիոն եվրոյից (մոտ 300 միլիոն լարի), որ նախատեսված է «COVID-19»-ի դեմ Վրաստանի կայունության համաձայնագրով, եւ որի միջոցով Եվրամիությունը Վրաստանին կօգնի իրականացնել իր հակաճգնաժամային տնտեսական ծրագիրը: Ծրագիրը ներառում է գործողություններ, որոնք ուղղված են եկամտի աղբյուրների կորստի հետեւանքով բացասական ազդեցությունների նվազեցմանը, աշխատատեղերի պահպանմանը, բիզնեսի աջակցությանն ու առողջապահական համակարգի ամրապնդմանը:

Մնացած միջոցները կհատկացվեն կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների գնահատման հիման վրա, որոնք վերաբերելու են սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելուն, ձեռնարկությունների աջակցությանը՝ աշխատատեղերը պահպանելուն եւ ինտենսիվ թերապիայի մահճակալների քանակն ավելացնելուն: Այս տրանշին նախորդել էր 100 միլիոն եվրոյի (մոտ՝ 400 միլիոն լարի) վարկ մակրոֆինանսական օգնության համար, որն իրականացվել էր այս տարվա նոյեմբերի 25-ին: Երկու տրանշն էլ կազմում է այն հիմնական 1,5 միլիարդ լարի ընդհանուր օգնության փաթեթի մաս, որը ներառում է նաեւ աջակցություն Վրաստանի առողջապահական համակարգին, սոցիալական ոլորտին եւ տնտեսության վերականգնմանը»,- ասված է Վրաստանում Եվրամիության պատվիրակության հայտարարության մեջ:

ԿՐԿԻՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ, ԾՐԱԳՐՎԱԾ ՄԵՂՄԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խմբագրության էլեկտրոնային փոստով ընթերցողների նամակներում կրկին բարձրացվում է համավարակի պայմաններում սահմանափակումների, առաջիկա Ամանորի կապակցությամբ այդ սահմանափակումների հնարավոր մեղմացումների թեման: Ընդառաջելով ընթերցողների ցանկությանը՝ խմբագրությունը ստորեւ ներկայացնում է միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշման համաձայն, նոյեմբերի 28-ից հունվարի 31-ը երկրում գործող սահմանափակումների, ինչպես նաեւ դեկտեմբերի 24-ից հունվարի 2-ը սպասվող որոշակի մեղմացումների ցանկը՝ ըստ ոլորտների եւ ժամանակահատվածների:

Նոյեմբերի 28-ից հունվարի 31-ը երկրում գործող սահմանափակումներն են.

- Տեղաշարժը ժամը 21:00-ից 05:00-ն՝ ինչպես հետիոտնի, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցների համար, արգելվում է նաեւ հասարակական տարածքում գտնվելը:

Բացառություն է Ամանորի՝ դեկտեմբերի 31-ի գիշերը եւ Սուրբ Ծննդյան՝ հունվարի 6-ի գիշերը:

- Արգելվում է ուղեւորների կանոնավոր միջքաղաքային փոխադրումը, այդ թվում՝ երկաթուղով, ավտոբուսով, միկրոավտոբուսով: Ավտոմեքենաների (ներառյալ՝ տաքսիները) սահմանափակումներ չկան:

- Ռեստորաններն ու սննդի կետերը ամբողջությամբ կանցնեն առաքման ծառայության:

- Արգելվում է մարզադահլիճների եւ լողավազանների աշխատանքը:

- Արգելվում է բոլոր տեսակի գիտաժողովների, դասընթացների, մշակութային, ժամանցային միջոցառումների անցկացումը, թույլատրելի է միայն առցանց ձեւաչափով:

- Արգելվում է մարզական, արվեստի եւ մշակույթի խմբակների/ստուդիաների գործունեությունը:

Մեծ քաղաքներում՝ Թբիլիսի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Գորի, Փոթի, Զուգդիդի, Թելավի եւ լեռնադահուկային հանգստավայրերում՝ Բակուրիանիում, Գուդաուրիում, Գոդերձիում եւ Մեստիայում կգործեն լրացուցիչ սահմանափակումներ.

- Թբիլիսի, Թելավի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Գորի, Փոթի, Զուգդիդի քաղաքներում սահմանափակ է հասարակական տրանսպորտի աշխատանքը,

- Առեւտրի օբյեկտները (բացառությամբ սննդի, կենդանիների կերերի, դեղատների, անասնաբուժական դեղատների, կենցաղային քիմիական նյութերի եւ հիգիենայի խանութների եւ մամուլի կրպակների) գործում են միայն հեռավար կարգով,

- Բաց եւ փակ տոնավաճառները չեն գործում, շարունակում են գործել ագրարային շուկաները,

- Դպրոցները, արհեստագործական դպրոցները եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները (բացի բժշկական կրթական ծրագրերից) ամբողջությամբ անցել են հեռավար ուսուցման ռեժիմի,

- Մասնավոր եւ պետական մանկապարտեզները դադարում են աշխատել:

Դահուկային հանգստավայրերում.

- Հյուրանոցների աշխատանքը թույլատրվում է միայն կարանտինային տարածքներ կազմակերպելու համար,

- Նաեւ դադարեցվում է լեռնադահուկային մայրուղիների եւ դահուկային ճոպանուղիների աշխատանքը:

Ինչ վերաբերում է դեկտեմբերի 24-ից հունվարի 2-ն ընկած ժամանակահատվածում սահմանափակումների մեղմացմանը, ապա

- Կաշխատեն առեւտրի կենտրոնները, բաց եւ փակ տոնավաճառները,

- Կվերականգնվի ինչպես քաղաքային, այնպես էլ՝ միջքաղաքային տրանսպորտի աշխատանքը:

Հունվարի 3-ից հունվարի 15-ը հայտարարվում են հանգստյան օրեր.

- Նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 24-ը գործող բոլոր սահմանափակումները վերականգնվում են.

- Չի աշխատում պետական կամ մասնավոր հաստատություն, բացառությամբ՝ բանկերի եւ ռազմավարական նշանակության օբյեկտների ու ծառայությունների:

Հունվարի 16-ից 31-ը կվերականգնվի քաղաքային եւ միջքաղաքային տրանսպորտի, առեւտրի օբյեկտների, բաց եւ փակ տոնավաճառների աշխատանքը,

- Շաբաթ-կիրակի տրանսպորտը, առեւտրի օբյեկտներն ու տոնավաճառները դադարում են աշխատել:

Այս ժամանակահատվածում սահմանափակումները չեն վերաբերում բոլոր մյուս տնտեսական գործողություններին պետական եւ մասնավոր շինարարական-վերանորոգման աշխատանքներին, բանկային եւ ֆինանսական գործունեությանը, սննդամթերքի, կենդանիների կերի, դեղատների, անասնաբուժական դեղատների, կենցաղային քիմիական նյութերի եւ հիգիենայի խանութների եւ մամուլի կրպակների աշխատանքին, առաքման եւ «անձամբ վերցնելու» ծառայություններին, գեղեցկության սրահների եւ էսթետիկ բժշկության կենտրոնների աշխատանքին, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ տեխնիկական զննման ծառայություններին, կենցաղային տեխնիկայի վերանորոգման ծառայություններին, ագրարային շուկայի գործունեությանը եւ այլն:

Ավտոմեքենաներով երթեւեկությունը (ներառյալ տաքսի) չի սահմանափակվում:

Էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 14-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ստեֆան Վիսկոնտինի (Ֆրանսիա), Էնդրյու Շիֆերի (ԱՄՆ), Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ալեքսեյ Սինեգուբովի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ:



Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը կարեւորել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված պատերազմից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցը տարածաշրջան: Նիկոլ Փաշինյանն անհրաժեշտ է համարել Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափում բանակցությունների վերականգնումը ԼՂ հիմնախնդրի համապարփակ կարգավորման նպատակով: Որպես առաջնահերթություն՝ վարչապետն ընդգծել է Արցախի կարգավիճակի հստակեցումը՝ հաշվի առնելով արցախցիների ինքնորոշման իրավունքի իրացման սկզբունքի կարեւորությունը, Արցախի՝ Ադրբեջանի կողմից գրավված տարածքների դեօկուպացիան, սեփական բնակավայրեր արցախահայության անվտանգ վերադարձի համար պայմանների ապահովումը, կրոնական ու մշակութային ժառանգության պահպանումը:

Հայաստանի վարչապետը դատապարտելի է համարել Ադրբեջանի կողմից եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների խախտումը, որի դրսեւորումը արցախա-ադրբեջանական շփման գծում դեկտեմբերի 11-ին եւ 12-ին տեղի ունեցած սադրիչ գործողություններն էին:

Հանդիպմանը քննարկվել են պատերազմից հետո ստեղծված իրավիճակին, բանակցային գործընթացի վերսկսմանը, արցախահայության իրավունքների վերականգնմանն ու անվտանգության ապահովմանը վերաբերող հարցեր:

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ՉԷ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նպատակահարմար չի համարում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը, քանի որ երկրի առջեւ ծառացած են բազմաթիվ չլուծված հարցեր:

«Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույցում վարչապետը նշել է, թե ինչու հնարավոր չէ անցկացնել արտահերթ ընտրություններ:

- Ինչո՞ւ, օրինակ, հենց հիմա արտահերթ ընտրությունները հնարավոր չեն կամ չարժե անցկացնել: Մի պարզ պատճառով, որովհետեւ արդեն ասացի՝ կա գերիների չլուծված հարց, կան որոնողական աշխատանքներ, որոնք ահավոր դժվար են գնում եւ հասկանալի պատճառներով, այդ թվում՝ Հայաստանի ներքին իրավիճակը լարելու համար Ադրբեջանն անընդհատ խոչընդոտներ է ստեղծում այդ աշխատանքների համար: Իսկ այդ արտահերթ ընտրությունների ընթացքում քարոզարշա՞վ է տեղի ունենալու: Բա այդ հարցերն ի՞նչ են լինելու: Ո՞վ է զբաղվելու այդ հարցերով:

Անդրադառնալով իր հրաժարականի վերաբերյալ կոչերին ու հայտարարություններին՝ Նիկոլ Փաշինյանն ասել է.

- Վարչապետի կարգավիճակում՝ որպես ժողովրդի կողմից ընտրված վարչապետ, ես նաեւ ժողովրդի իշխանություն ձեւավորելու հնարավորության եւ լիազորության պահպանող եմ: Այսինքն, ի պահ է հանձնվել այդ իշխանությունն ինձ: Ոչ թե իշխանությունը, այդ կարգավիճակը պատկանում է ինձ, այլ այդ իշխանությունն ի պահ է հանձնվել ինձ, իսկ այդ կարգավիճակի տերը ժողովուրդն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Եվ այդ իշխանության հետագա ճակատագրի համար ես պատասխանատու եմ Հայաստանի Հանրապետության ժողովրդի առաջ,- հայտարարել է Նիկոլ Փաշինյանն ու հավելել, որ հրաժարական կտա միայն ժողովրդի կամաարտահայտման հավաստի արդյունքների հիման վրա, եւ քանի դեռ նման կամաարտահայտություն տեղի չի ունեցել, շարունակելու է կատարել վարչապետի իր գործառույթները:

Հիշեցնենք, որ խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները նոյեմբերի 11-ից տարբեր ակցիաներ են իրականացնում՝ պահանջելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Խորհրդարանական եւ արտախորհրդարանական ավելի քան 16 կուսակցություններից բաղկացած «Հայրենիքի փրկության շարժում»-ը վարչապետի միասնական թեկնածու է առաջադրել Հայաստանի նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՑԿԱՑՆՈՒՄ

Դեկտեմբերի 17-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի հետ քաղաքական խորհրդատվությունների շրջանակներում հանդիպում ունեցավ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ատենադպիր Ռադիկ Կարապետյանի, Ռամկավար ազատական կուսակցության ատենապետ Հրաչյա Կարապետյանի, Կանաչների կուսակցության նախագահ Արմենակ Դովլաթյանի, «Պաշտպան Հայրենյաց» ազգային մշակութային հիմնադրամի նախագահ Գագիկ Սաֆարյանի, «Հայոց Հայրենիք» կուսակցության նախագահ Անահիտ Եղոյանի, «Արդարություն» կուսակցության նախագահ Արթուր Բալոյանի հետ:

Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել երկրում ստեղծված իրավիճակի, այն հանգուցալուծելու ուղիների շուրջ: Կուսակցությունների ներկայացուցիչներն իրենց տեսակետներն ու մոտեցումներն են արտահայտել իրավիճակի վերաբերյալ:

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվրոպական միությունը հայտնել է Հայաստանի կառավարությանը Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանն աջակցելու նպատակով Հայաստանին 9 միլիոն եվրո դրամաշնորհ հատկացնելու մասին:

ԵՄ որոշումը դատական եւ իրավական բարեփոխումների եւ հակակոռուպցիոն ռազմավարությունների, մակրոտնտեսական կայունության, պետական ֆինանսական կառավարման եւ պետական բյուջեի թափանցիկության բարեփոխումների իրականացման առաջընթացի դրական գնահատանքի արդյունք է:

2,25 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի Ազգերի լիգայի C դիվիզիոնի երկրորդ ենթախմբի հաղթանակի համար՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ՈՒԵՖԱ-ից կստանա մոտ 2,25 միլիոն եվրո:

Նույնքան գումար կստանան C դիվիզիոնի մյուս ենթախմբերում հաղթանակած թիմերը՝ Ալբանիան, Սլովենիան եւ Մոնտենեգրոն:

A, B դիվիզիոնների ենթախմբերում հաղթած թիմերը, համապատասխանաբար՝ կստանան 3 եւ 4,5 միլիոն եվրո:

Հիշեցնենք, որ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը Ազգերի լիգայի C դիվիզիոնի երկրորդ ենթախմբի վերջին մրցափուլում հաղթեց Հյուսիսային Մակեդոնիային եւ պատմության մեջ առաջին անգամ դարձավ ենթախմբի հաղթող: Պատմական խաղի միակ գնդակը հեղինակեց Հովհաննես Համբարձումյանը: Խոակին Կապառոսի գլխավորած թիմն իրավունք ստացավ հանդես գալու Ազգերի լիգայի B դիվիզիոնում:

ԵՌՕՐՅԱ ՍՈՒԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստորագրել է դեկտեմբերի 19-ից Հայաստանում եռօրյա սուգ հայտարարելու որոշումը:

Որոշման մեջ նշված է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով Հայրենիքի պաշտպանության համար զոհված մեր նահատակների հիշատակը ոգեկոչելու նպատակով, 2020 թվականի դեկտեմբերի 19-21-ը Հայաստանի Հանրապետությունում հայտարարվում է եռօրյա սուգ:

Այդ օրերին Հայաստանում կիջեցվեն պետական դրոշները:

Արցախյան վերջին պատերազմի նահատակների հիշատակի սգո երթը Երեւանի Հանրապետության հրապարակից եռաբլուր՝ տեղի կունենա շաբաթ օրը՝ դեկտեմբերի 19-ին, ժամը 13:00-ին:

ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ է ԳԵՐԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Լեռնային Ղարաբաղում ռուսական կողմի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Ռուստամ Մուրադովի հայտարարությամբ, Ադրբեջանը եւ Հայաստանը փոխանակվել են գերիներով:

Նրա խոսքով, գերիների փոխանակումն իրականացվել է Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների նոյեմբերի 9-ին կնքած պայմանագրի հիման վրա՝ «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով:

Մասնավորապես, դեկտեմբերի 14-ին ադրբեջանական կողմին է փոխանցվել 12 գերի, հայկական կողմին՝ 44-ը:

Գերիների փոխանակման գործընթացը շարունակվում է:

ՎԵՐԱԴԱՐՁԵԼ է ԱՎԵԼԻ ՔԱՆ 40 ՀԱԶԱՐ ԱՐՑԱԽՑԻ

Ռուսական խաղաղապահ ուժերի ջանքերով, դեկտեմբերի 16-ի դրությամբ, ապահովվել է ավելի քան 40 հազար արցախցու անվտանգ վերադարձը Լեռնային Ղարաբաղ:

Ռուսաստանի պաշտպանության նախարարության տեղեկատվությամբ, հումանիտար ականազերծման կենտրոնի ռուս մասնագետները ականազերծել են 195 հա տարածք եւ 60 կմ ճանապարհ: Հայտնաբերվել եւ ոչնչացվել է ավելի քան 6 հազար պայթյունավտանգ առարկա:

Ռուսական խաղաղապահ առաքելության բժիշկները Ստեփանակերտի դաշտային հոսպիտալում օգնություն են ցույց տվել 29 բնակչի, այդ թվում՝ 4 երեխայի: Մարտակերտ քաղաքում եւս ավարտվել է երկրորդ ռազմական հոսպիտալի բացազատումը: Այնտեղ բժշկական օգնություն է ցույց տրվել, ընդհանուր առմամբ, 558 բնակչի, այդ թվում՝ 67 երեխայի:

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչների հետ համատեղ, շարունակվում է հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ զոհվածների մարմինների փոխանակումը, ինչպես նաեւ անհետ կորածների որոնումը:

ՄԱՀԱՑԵԼ է ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՅՐԸ՝ ՎՈՎԱ ՓԱՇԻՆՅԱՆԸ



Դեկտեմբերի 16-ին ծանր ու երկարատեւ հիվանդությունից հետո, կյանքի 80-րդ տարում մահացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայրը՝ Վովա Փաշինյանը:

«Վրաստան» թերթը ցավակցում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին սիրելի հոր մահվան կապակցությամբ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

21.12.2020 Սուրբ Աբրահամի եւ Խորենի, Կոզմայի եւ Դամիանոսի հիշատակության օր

24.12.2020 Սուրբ Դավիթ մարգարեի եւ Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակության օր

26.12.2020 Սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օր

28.12.2020 Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակության օր

29.12.2020 Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց

29.12.2020 Սուրբ Որոտման Որդիների՝ Հակոբոս առաքյալի եւ Հովհաննես ավետարանչի հիշատակության օր

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՎԱՌՎԵՑԻՆ ԹԲԻԼԻՍԻԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Դեկտեմբերի 17-ի երեկոյան վառվեցին Թբիլիսիի գլխավոր տոնածառի լույսերը: Կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի հաշվառմամբ, ցավոք, տոնակատարությանը հնարավոր էր հետեւել առցանց՝ ուղիղ եթերով:

Տոնածառի լույսերի վառման արարողությանը մասնակից, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն բնակչությանը շնորհավորել է Բարբարոբա տոնի, ինչպես նաեւ առաջիկա Ամանորի առիթով:

Մայրաքաղաքի քաղաքապետը խոսել է կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի մասին՝ հայտարարելով, որ ներդրված սահմանափակումների գլխավոր նպատակային թիրախը քաղաքացիների առողջությունն է՝ ընդգծելով, որ «բոլորս միասին պետք է պատերազմ հայտարարենք համավարակին»:

Կախա Կալաձեն անդրադարձավ նաեւ սոցցանցերում բողոքի ալիք բարձրացրած կես միլիոն լարի արժողությամբ Ամանորյա գալա համերգի թեմային՝ նշելով, որ դա ուղղված է արվեստի ներկայացուցիչներին որոշակի նյութական աջակցության ցուցաբերմանը:

- Իսկ արվեստի ոլորտի ներկայացուցիչներն ինչո՞վ ապրեն: Դուք նրանց եկամտի վրա թքա՞ծ ունեք,- հայտարարել է քաղաքապետը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

54 ՀԱԶԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԴԵՆ ՍՏԱՑԵԼ Է 300-ԱԿԱՆ ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետի պաշտոնակատար Գիորգի Գախարիան կառավարության նիստում հայտարարեց, որ ներկա դրությամբ 300-ական լարիի միանվագ օգնություն է ստացել 54 հազար քաղաքացի:

«Նոյեմբերի 28-ին սկսված սահմանափակումներին ի պատասխան, Վրաստանի կառավարությունը հայտարարեց քաղաքացիների նպատակային օգնության 4-րդ փուլը: Այսօրվա դրությամբ, 300 լարիի միանվագ օգնություն ստանալու համար գրանցվել է ավելի քան 65 հազար դիմում, որոնցից 54 հազար դիմումն արդեն բավարարվել է: Իհարկե, մեր քաղաքացիների բոլոր դիմումները մենք մինչեւ նոր տարի կբավարարենք»,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ, ԳԱԶԻ, ՋՐԻ ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐԸ՝ ՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով, Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորիչ ազգային հանձնաժողովը գործի է դրել էլեկտրոնային անդորրագրերի պարտադիր կարգավորումը:

Դեկտեմբերի 15-ից էլեկտրաէներգիայի, բնական գազի եւ խմելու ջրի սպառողները կոմունալ ծառայությունների էլեկտրոնային անդորրագրերը ստանում են կարճ տեքստային հաղորդագրությամբ (sms-ով), այն համարին, որը նշված է համապատասխան կոմունալ սպասարկման ընկերությունում:

ՍԷՄԷԿ-ը կոչ է անում սպառողներին, էլեկտրոնային անդորրագրերը ստանալու համար կոմունալ ծառայությունների ընկերություններին տրամադրել հեռախոսային համարները՝ թեժ գծի կամ USSD կոդի միջոցով *303#:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՆԱ ՄԻՇՏ ՊԱՀԱՆՋԿՈՏ ԷՐ ՈՒ ԱՐԴԱՐ

Կորոնավարակային հիվանդությունից մահացել է Ծալկայի մունիցիպալիտետի Չիվքբիլիսա գյուղի հանրային դպրոցի տնօրեն Վարդուհի Սարգսյանը:

Վարդուհին 30 տարի ղեկավարել է նշյալ դպրոցը: Տիկին Վարդուհին իր ամուսնու՝ Շաքրո Խաչատրյանի հետ 50 տարի նաեւ ուսուցչություն է արել: 2019 թ. Վ. Սարգսյանը հաջողությամբ հանձնել էր մասնագիտական ունակության քննությունը, իսկ մինչ այդ՝ քիմիա-կենսաբանության ուսուցչուհին, կենսաբանության քննությանը հավաքել էր անհրաժեշտ կրեդիտ-միավորներ ու 69 տարեկան հասակում դարձել ավագ ուսուցիչ:

Չիվքբիլիսայի հանրային դպրոցի հին շենքը տիկին Վարդուհու ջանքերով լրիվությամբ վերանորոգվել է:

2019 թվականին GUARDIAN.GE-ի հետ հարցազրույցի ժամանակ հարցին՝ որքանո՞վ է պահանջկոտ ու խիստ ուսուցիչների եւ մյուս աշխատակիցների հանդեպ, տիկին Վարդուհին պատասխանել էր, որ խիստ է, բայց՝ մարդկային:

Նրա գործընկերները Վարդուհի Սարգսյանին միշտ կհիշեն նրան՝ որպես բարձրակարգ մասնագետի, բարյացակամ մարդու, կարգապահ ու արդար ղեկավարի:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հայկական թագավորություն: 5.Վ.Տերյանի ծննդավայր գյուղը: 9.Նիհար, վտիտ: 10.Ծիրանի տեսակ: 11.Նիրհել, կիսաքուն վիճակում լինել: 14.Ճակատամարտի վայր Արարատի նահանգի Բագրեւանդ գավառում: 15.Լեհ գրող ... Միցկեւիչ: 19.Կուբայի մայրաքաղաքը: 20.Էլեոնորան մերձավորների շրջանում: 21.«... ենք ծխում, մոմ վառում» (Հովհ.Թումանյան): 22.Լիքը, առատ: 23.Պետություն Ասիայում: 26.Անվանի դերասան ... Գասպարյան: 27.Երկրաչափական մարմին: 28.Ազնիվ մետաղ: 29.Ամերիկացի երգիչ եւ դերասան ... Գարդներ: 30.Գնացքների նորոգարան: 31.Կաշի, մարմնի պաշտպանիչ միջոց: 34.... քաշել, սպանել: 37.Նախկին պիոներական ճամբար Վանաձորում՝ Հայկական ...: 39.Ետադաս կապ: 40.Համի տեսակ: 41.Երաժիշտ, կոմպոզիտոր ... Գեւորգյան: 42.Դեղի կոճակ: 44.Միրգ, բանջարեղեն: 46.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 47.Մկրտիչ Արմենի գրական հերոսուհի: 48.Մայրը Գիքորի լեզվով: 49.Խոնավ, չչորացած: 51.Պարոնը՝ գրաբարյան հայերենով: 53.Լիճ Թբիլիսիի մոտակայքում: 54.Արարատ լեռան փոքր գագաթը: 56.Հերոսուհի «Շիրազի վարդը» ֆիլմում: 57.Որսի կենդանի: 58.Վրացական դրամական միավորը: 59.Հերոսուհի «Կովկասի գերուհին» ֆիլմում: 60.Համադասական շաղկապ: 61.Թբիլիսիում լույս տեսնող պարբերական:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ա.Չեխովի պատմվածքներից: 2.Լեռնագագաթ Հայաստանում: 3.Վրաց նախկին ֆուտբոլիստ ... Կալաձե: 4.Նար-Դոսի ստեղծագործություններից «... Սարոյան»: 5.Գյանջան նախկինում՝ որպես հայկական քաղաք: 6.... խոսք տալ: 7.Կեղտոտ, առանց լվանալու: 8.Վրաց հայտնի երաժիշտ, երաժշտագետ Միխեիլ ...: 12.Ջրոտ, ոչ պինդ: 13.Արեւմտահայերի ազգանվան վերջում: 16.Առաջին ձայնանիշը: 17.Քաղաք Արցախում: 18.Սերո Խանզադյանի պատմավեպերից «... Սպարապետ»: 19.Պետություն Ասիայի հարավում: 22.Շան կերակուր: 23.Հեղուկ մետաղ: 24.Վաթսուն վայրկյան: 25.Ջավախահայ գրող Ալբերտ ...յան: 31.Քաղաք Հյուսիսային Օսեթիայում: 32.Մակերեսի չափման միավոր: 33.Արագ-արագ, շուտ-շուտ: 35.Ուսուցչապետ, դպիր: 36.Գետ Վրաստանում: 38.Քաղաք Լիտվայում: 40.Յոթերորդ դարի հայ մանրանկարիչ: 43.Ասորեստանի վավաշոտ թագուհին: 45.Սերգեյ Փարաջանովի ֆիլմերից՝ «Աշուղ ...»: 50.Ասենք, ասեք, ...: 51.Ժամանակի միավոր: 52.Ծիածանի աստվածուհին Հին Եգիպտոսում: 53.Կաղ, ոտքի արատ ունեցող: 55.Գետ Ֆրանսիայում: 58.Արյունածուծ միջատ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ասպատակ: 9.Սիրած: 10.Բասկ: 11.Բելգրադ: 13.Եզնիկ: 16.Լոռ: 17.Թիմ: 19.Անխեթ: 22.Աչքիս: 24.Ինգմար: 25.Միկա: 27.Հաղպատ: 29.Ապարոշ: 32.Ակվարել: 33.Ջիբրով: 35.Աղոտ: 37.Կուտ: 39.Ուղերձ: 40.Մթիկ: 43.Նաեւ: 44.Վասո: 47.Ասր: 49.Սիրող: 50.Եվրո: 53.Վերեւ: 54.Ուղտ: 55.Աղել: 57.ԷՀՄ: 58.Երզնկա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հսկել: 2.Տանգո: 3.Ռաբաթ: 4.Ոսկե: 5.Կրոն: 6.Կծիկ: 8.Կադիս: 12.Լոնք: 14.Զինգ: 15.Իդեա: 18.Ասիա: 19.Անոպա: 20.Խմորեղեն: 21.Թրաշ: 23.Իմպորտ: 26.Կտավ: 28.Անիկ: 29.Ավո: 30.Արաղ: 31.Ոլորան: 34.Բուքսիր: 36.Տձեւ: 38.Սիս: 41.Թաղում: 42.Կրետե: 45.Ասեղ: 46.Որեւէ: 48.Արազ: 51.Ողն: 52.Հլա: 56.Եկ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445